

616.9

7-29

17 JUL 2013
Крайне важно при
различиях в работе
судов.

04 AUG 2010

7-29

ՊԱՏԿ ԱՍՏՈՒՄՆԵՐՈՎ,
ՆԱԽԱՊԱՀՊԱՆԵՑԵՔ
ՅԵՐԵՄԱՆԵՐԻՆ ԴԻՖՏԵՐԻԱՅԻՅ

ՀԱՅԿ 10 ԿՈՊ.

19287

ՀԱՅՍՏԱՆԻ
ՅԵՐԵՎԱՆԻ Ա. ՄԱՅՈՒՆՅԱՆԻ 1940

Гос.
Публичная
Библиотека
в
Ленинграде

80-87

ՊԱՅՔԱՐԵՑԵՔ ՎԱՐԱԿԻՉ ՇԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՍ

ՊԱՏՎԱՍՏԱԻՄՆԵՐՈՎ ՆԱԽԱՊԱՀՊԱՆԵՑԵՔ ՅԵՐԵԽԱՆԵՐԻՆ ԴԻՖՏԵՐԻԱՅԻՑ

Դիֆտերիան շատ ծանր վարակիչ հիվանդութիւն է: Նա առաջանում է հատուկ միկրոբէրց—դիֆտերիայի ցուպիկից, վորը նրան գտնող դիտնականի անունով կոչվում է լեֆլերյան ցուպիկ:

Դիֆտերիայով ամենից ավելի հաճախ հիվանդանում են 1-ից մինչև 10 տարեկան յերեխաները: Չափահաս մարդիկ դիֆտերիայով հազվադեպ են հիվանդանում:

Դիֆտերիայով վարակվում են գլխավորապես հիվանդներից կամ բացիլակիրներից: Բժիշկները բացիլակիր են անվանում այնպիսի մարդկանց, վորոնք իրենք չեն հիվանդանում, բայց նրանց բերնախոռոչում կամ քթում դիֆտերիայի ցուպիկներ կան: Սովորաբար վորոշ ժամանակով բացիլակիր են լինում նորերս միայն դիֆտերիայով հիվանդացած կամ դիֆտերիայով հիվանդների հետ շփած մարդիկ:

Դիֆտերիայի վարակը հիվանդից կամ բացիլակիրից փոխանցվում է թքի ու լորձի մանրաբույն կաթիլների հետ, վորոնք հազալու, փռտալու, խոսելու ժամանակ մեծ քանակութամբ դուրս են թռչում բերանից ու քթից: Այդ կաթիլները ցրվում, տարածվում են մինչև մեկ ու կես յերկուս ու կես մետր տարածութան վրա և կարող են վարակել շրջապատողներին նրանց ներծածած ողի միջոցով:

Վարակիչ են նաև այն իրերը, վորոնցից ոգտըվել է հիվանդը՝ նրա ամանեղենը, հագուստը, անկողինը, խաղալիքները, վորովհետև նրանց վրա ընկնում են նրա թքի կաթիլները: Այդ պատճառով առողջ մարդկանց չի կարելի գործածել հիվանդի չվարակողերծված իրերը, նրանց պետք է դեզինֆեկցիայի յենթարկել:

Մարդու վարակվելու ժամանակ դիֆտերիայի ցուպիկները պահվում են նրա բերնախոռոչում կոկորդի նշագեղձերի վրա և առաջացնում նրանց բորբումը— դիֆտերիային անդինա, վորը, յեթե չը-

բուժեն, կարող է տարածվել շնչական ուղիներէ վրա և առաջացնել կոկորդի ախտահարում— խոռիկ: Խոռիկի ժամանակ շնչառութիւնը յերբեմն այնքան դժվար է լինում, վոր կարիք է լինում ոպերացիայի յենթարկել հիվանդին, վորպեսզի ողը կարողանա մտնել նրա թոքերի մեջ: Քթի լորձաթաղանթի վրա ընկնելու դեպքում դիֆտերիայի ցուպիկները քթի դիֆտերային հիվանդութիւն է առաջացնում:

Դիֆտերիայի ցուպիկները հիվանդի որդանիզմում բազմանում են և ուժեղ թույն արտադրում, վորը թունավորում է ամբողջ որդանիզմը: Հիվանդը կարող է մարմնի զանազան մասերի կաթված ստանալ: Հիվանդի որդանիզմը դիֆտերիայի դեմ հակաթույն է արտադրում: Բայց այդ հակաթույնը հիվանդի որդանիզմի կողմից շատ դանդաղ է արտադրվում: Այդ պատճառով բժիշկները հիվանդին պատրաստի հակաթույն, այսպես կոչված, հակադիֆտերիայի շիճուկ են սրսկում: Ի՞նչպես է ստացվում այդ շիճուկը: Հատուկ լաբորատորիաներում ձիերի մաշկի տակ փոքր քանակութամբ դիֆտերիային թույն են սրսկում: Զիւռ որդանիզմը հակաթույն է արտադրում, վորն անցնում է նրա արյուն մեջ: Դրանից հետո ձիուց արյուն են վերցնում և նրանից շիճուկ պատրաստում, վորը բուժիչ միջոց է հանդիսանում դիֆտերիայի դեմ: Հակադիֆտերային շիճուկը սրսկում են հիվանդի մաշկի տակ: Վորքան ավելի շուտ է սրսկված շիճուկը, այնքան ավելի արագ և կատարովոր դիֆտերիայի թույնի վնասազերծումը և այնքան ավելի արագ կազդուրվում հիվանդը:

Առողջ յերեխաներին դիֆտերիայից նախապահպանելու համար նրանց նախապահպանական հակադիֆտերային պատվաստումներ են անում: Դրա համար բժիշկները յերեխաների մաշկի տակ վնասազերծված դիֆտերային թույն են սրսկում: Պատվաստումներն անվնաս են և մեծ մասամբ որդանիզմին անզգայունակ են դարձնում դիֆտերիայի նկատմամբ: Իսկ յեթե յերեխան հիվանդանում էլ է դիֆտերիայով, ապա հիվանդութիւնը նրա մոտ ավելի

33240

3-5260a

քան թիթև և ընթանում և բարդություններն զգալի-
որեն հաղվադեպ են լինում:

Պատվաստում են բոլոր յերեխաներին, սկսած
կես տարեկանից մինչև 8 տարեկան հասակը: 8 տա-
րեկանից բարձր յերեխաներին պատվաստում են ան-
հրաժեշտության դեպքում, յեկրք համաճարակի
սպառնալիք կա: Յերեխային անում են ընդամենը
յերեք ներարկում մաշկի տակ: Ընդմիջումն առաջին
և յերկրորդ ներարկումների միջև 3-4 չաբաթ է,
յերրորդ ներարկումն անում են 6-12 ամսից հետո:

Ներարկումից հետո յերեխայի ջերմաստիճանը
կարող է մի քիչ բարձրանալ, յերեան է գալիս ցա-
վոտություն ներարկված տեղում: Բայց այդ բոլորն
անցնում է 1-2 օրվա ընթացքում:

Պատվաստումները խիստ իջեցնում են դիֆտերի-
այով հիվանդացումը: Այն յերեխաները, վորոնց 2
ներարկում են արել, մոտավորապես 4 անգամ ավել-
ի սակավ են հիվանդանում, քան չպատվաստված-
ները: Այն յերեխաները, վորոնց արել են յերրորդ
ներարկումը (առաջին յերկուսից 6-12 ամիս անց),
չպատվաստվածների համեմատությամբ մոտավորա-
պես 7-8 անգամ ավելի սակավ են հիվանդանում:
(Մոսկվայի մարզի Մեչնիկովի անվան ինստիտուտի
տվյալները):

Փոքրահասակ յերեխաները տարած գրիպ, կար-
մըրուկ, լուծ և այլ հիվանդություններից հետո
կարող են կորցնել դիֆտերիայի նկատմամբ իրենց
անզգայունակությունը: Այդ դեպքում բժշկի ցու-
ցումով լրացուցիչ պատվաստում պետք է անել նը-
րանց:

Ծնողներ: Նախապահպանական պատվաստումներ
արեք ձեր յերեխաներին դիֆտերիայի դեմ: Չմոռա-
նաք յերրորդ ներարկումն անել յերկրորդից հետո
6-12 ամիս անց:

Պատվաստեցեք յերեխաներին դիֆտերիայից:

Պարզեց. Ավ. Եաթիրյան, Պատ. խմբ. բժ. Մ. Մկրտչյան

Տեխ. խմբ. Ի. Վարդանյան, Սրբազրիչ՝ Հ. Մանուկյան

Պատվեր թ. 1133. Պատվեր 346. Տիրամ 4000

Հանձնարարումը տպարան, Յերեան, Լենինի 65

ՀՀ Ազգային գրադարան



NL0266694

7 276

35260a